



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ**

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1

Հեռ.՝ (+374 11) 800 , ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

ՁԿ-175

« Հ Պ Ա Շ Տ Պ Ա Ն ՈՒ Թ Յ Ա Ն Ն Ա Խ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն »

Ե Ջ Ր Ա Կ Կ Յ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԻՔԱՆԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ
ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-ԻՆ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱՏԵՍՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ
ԱՐԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆԸ ԿԱՄ
ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆԸ ՀԱՆԳԵՑՆՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության և Լիբանանի Հանրապետության միջև ռազմական համագործակցության մասին» 2018 թվականի նոյեմբերի 2-ին ստորագրված համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 5-րդ հոդվածի համաձայն՝ ուղարկող կողմը հոգում է իր ներկայացուցիչների ճանապարհաձախսը, աշխատավարձը, առողջության և պատահարների ապահովագրությունը և իր անձնակազմի հետ կապված ցանկացած այլ ծախս՝ բացառությամբ անհետաձգելի բժշկական օգնության հետ կապված ծախսերի: Ընդունող կողմը հոգում է ուղարկող կողմի պատվիրակության անդամների ներքին տրանսպորտային փոխադրումների, կեցության և սննդի հետ կապված ծախսերը, ինչպես նաև ընդունող կողմը ուղարկող կողմի անձնակազմին անվճար հիմունքներով պետք է ցուցաբերի անհետաձգելի բժշկական օգնություն իր ռազմական հաստատություններում, իսկ ռազմական հաստատություններից դուրս՝ պետք է հատուցի ուղարկող կողմը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ Համաձայնագրով ենթադրվում է Հայաստանի Հանրապետության համար ֆինանսական պարտավորությունների առաջացում, ուստի և պետական բյուջեի ծախսերի ավելացում:

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Կատ.՝ Սոնա Միրզոյան
Միջազգային համագործակցության վարչություն
Հեռ. (011) 800-348